



65. ԱՆԴԱՆՈՒ ՄԱՐԹ 2Ի ԿԱ

Մին իրփիվերի կնգան մին մաղար տղա յա ինձում: Հուց ա պլտահում, վար էտ տղան ծանդր հիվլնդանում ա: Մին օր տա հա ա տրեռնում մորն ասում.—Ազի, ես մըհոնելը մըռնըլական ըմ, քեզ նզովք ըմ քցո՛ւմ, վար իմ վերչին ասածըս անհա վուշ՝ բաղարաքյիս էն մարթուցը կըթողես նստեն, վար վըհչ մին դանդ շօնեն:

Տղան վար մըհոնում ա, տանում ըն թաղում, կյամ բաղարաքյին նըստում, մարը հվաքված մարթուցն ասում ա.—Ա՛ ժուղովուրթ, հինչ վար ըսըլական ըմ, իմ մաղար տղես խնթիրքն ա, ես ծընզ ասում ըմ, վար քյըփըրնեքետ նի շի կյա՝ խուխես բաղարաքյին թող էն մարթը նստեն, վար դանդ շօնեն, ցավ շօնեն, վար սրտումը յարա շի կա: էտ խոսկը մարը վար ասում ա, ժուղովուրթը լոխ դոռալի տոնս ըն կյամ, մարթ շի մնամ: էտ սքյուվըեր կնեգյը թա՛ լան՛վ, լան՛վ, վըհենը կացեքյ, ես մհհենգյ կլխու ինգյեցեն, վար էտ պենն իմ տղաս ասալ ա, հանցու դանդըս սրտես շատ շի ծընդըրանա, գլիդացեն, վար ըխշարքումըս անդանդ, անցավ մարթ շի կա:

